ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Կարեն Հովսեփյան, Արմեն Հովհաննիսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ և էներգետիկ ենթակառուցվածքների բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Վրաստանի Հանրապետություն, քաղաք Թբիլիսի, 2024թ. հոկտեմբերի 2-ից մինչև հոկտեմբերի 4-ը ներառյալ

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն 2024թ. հոկտեմբերի 3-4-ը կայացած «Enabling PV Forum for South Caucasus & Central Asia» խորագրով ֆորումին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Բացման խոսքում հատկապես կարևորվել է Eclareon, Eurosolar Georgia, GIZ և այլ գործընկերների կողմից գործադրված ջանքերը վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտներում քաղաքականության բարելավման և նախանշված նպատակներին հասնելու հարցում:
   Ֆորումին մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների պատվիրակներ, մասնավոր և բանկային հատվածի ներկայացուցիչներ, ներդրողներ, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներգրավված ընկերություններ:

   Պանելային քննարկումների ընթացքում ներկայացվել է ՀՀ էներգետիկայի բնագավառի, մասնավորապես՝ վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտների ընթացիկ վիճակը, մասնավորապես՝ ինքնավար էներգաարտադրության ոլորտում գրանցված նշանակալի արդյունքները (շուրջ 353 ՄՎտ տեղակայված հզորություն), ինչպես նաև էներգետիկայի բնագավառում ՀՀ կառավարության տեսլականը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հրավիրված հյուրերից Շվեյցարիայի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերականգնվող էներգետիկայի ոլորտում իրենց նվաճումները, կիրառվող տեխնոլոգիական նորարարությունները, ինչպես նաև գործընկեր երկրների հետ փոխհամագործակցություն ծավալելու պատրաստակամությունը:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ֆորումի ավարտին կազմակերպիչների կողմից շեշտվել է կարևորությունը ապահովելու սույն նախաձեռնության շարունակականությունը՝ վերականգնվող էներգետիկայի խթանման ապահովման համատեքստում երկկողմ և բազմակողմ համագործակցությունը խորացնելու անհրաժեշտությունը, միաժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն արձանագրված արդյունքների ամփոփումն իրականացնել հաջորդ տարի կայանալիք ֆորումի ընթացքում:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Առաջարկվել է մեկտեղել գործընկերների ջանքերը նախանշված նպատակներին հասնելու հարցում, ընդլայնել սույն ֆորումի շրջանակներում միջազգային համագործակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակը երկրի կարիքներին համապատասխան, իսկ արձանագրված արդյունքներն ամփոփել հաջորդ տարի կայանալիք ֆորումի ընթացքում:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության
վերականգնվող էներգետիկայի բաժնի
գլխավոր մասնագետ — Կարեն Հովսեփյան

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի
վարչության էներգետիկ
ենթակառուցվածքների բաժնի
գլխավոր մասնագետ — Արմեն Հովհաննիսյան